

ՀԱՐՑԱՇԱՐ

<<Ընդհանուր երկրագործություն, հողագիտություն, հիդրոմելիորացիա և ագրոքիմիա>> մասնագիտության ընդունելության

Երկրագործություն

1. Գյուղատնտեսական բույսերի կյանքի պայմանները, անհրաժեշտ գործոնները և դրանց կանոնավորումը:
2. Գիտական երկրագործության օրենքները և դրանց բացահայտումը:
3. Հողի բերրիությունը և կուլտուրականացումը, կուլտուրականացման մեթոդները:
4. Հողի ջրային ռեժիմը և դրա կանոնավորումը:
5. Երկրագործություն
6. Գյուղատնտեսական բույսերի կյանքի պայմանները, անհրաժեշտ գործոնները և դրանց կանոնավորումը:
7. Գիտական երկրագործության օրենքները և դրանց բացահայտումը:
8. Հողի բերրիությունը և կուլտուրականացումը, կուլտուրականացման մեթոդները:
9. Հողի ջրային ռեժիմը և դրա կանոնավորումը:
10. Հողի օդային ռեժիմը և դրա կանոնավորումը:
11. Հողի ջերմային ռեժիմը և դրա կանոնավորումը:
12. Հողի սննդային ռեժիմը և դրա կանոնավորումը:
13. Հասկացություն մոլախոտային բուսականության մասին, դրանց հասցրած վնասը, կենսաբանական առանձնահատկությունները:
14. Մոլախոտերի դասակարգումը:
15. Մակաբույժ մոլախոտերը և պայքարը դրանց դեմ:
16. Մոլախոտերի հաշվառման մեթոդները, քարտեզագրումը:
17. Մոլախոտերի դեմ պայքարի նախազգուշական միջոցառումները:
18. Մոլախոտերի դեմ պայքարի ագրոտեխնիկական միջոցառումները:
19. Մոլախոտերի դեմ պայքարի քիմիական եղանակը:
20. Հողի մշակման գիտական հիմունքները և խնդիրները:
21. Հողի մշակման տեխնոլոգիական գործընթացները:
22. Հողի հիմնական և մակերեսային մշակման եղանակներն ու ձևերը:
23. Ջրային և հողմային էրոզիայի ենթակա հողերի մշակման առանձնահատկությունները: Հողի մշակման նվազեցումը և դրա ագրոտնտեսական հիմնավորումը:
24. Բույսերի հաջորդականության անհրաժեշտության պատճառները:
25. Ուսմունք ցանքաշրջանառության մասին, անհերթափոխ ցանքեր, մոնոկուլտուրա:
26. Ցանքաշրջանառությունների դասակարգումը:
27. Միջանկյալ մշակաբույսերը ցանքաշրջանառություններում:
28. Երկրագործության համակարգերը և դրանց պատմական զարգացումը:
29. Ոռոգվող հողերի մշակման առանձնահատկությունները:
30. Մշակաբույսերի գնահատումը որպես նախորդ:

Հողագիտություն

1. Հասկացություն հողի և դրա բերրիության մասին, բերրիության տեսակները և բարձրացման ուղիները:
2. Հողառաջացնող մայրատեսակները, դրանց կարգաբանումը: Հողի հանքային մասի առաջացումը:
3. Ապարների հողմահարման գործընթացը, հողմահարման ձևերը: Հողմահարման դերը հողառաջացման գործում:
4. Հողի մեխանիկական կազմը, դրա կարգաբանումը և դերը հողի հիմնական հատկությունների ձևավորման գործում:
5. Հողագոյացման գործընթացի էությունը: Կենդանի օրգանիզմների դերը հողառաջացման գործում:
6. Հողի հումուսը, դրա քանակական ու որակական կազմը: Հումուսի դերը հողագոյացման և հողի բերրիության ստեղծման գործում:
7. Հասկացություն բուսական ֆորմացիաների մասին, դրանց խմբավորումները և դերը հողագոյացման գործընթացում:
8. Հողի պրոֆիլի ձևավորումը և դրա մորֆոլոգիական (ձևաբանական) հատկանիշները:
9. Հողային լուծույթը, դրա դերը բույսի կյանքում և գյուղատնտեսական նշանակությունը:
10. Հողային լուծույթի հիմնական հատկությունները և դրանց կարգավորման ուղիները: Հողի բուֆերականությունը:
11. Հողի ստրուկտուրան, դրա ագրոնոմիական նշանակությունը: Ստրուկտուրայի առա-ջացման գործոնները և քայքայման պատճառները:
12. Ջրի ձևերը հողում, շարժման օրենքները, մատչելիությունը բույսերի համար:
13. Հողի ջրային հատկությունները, դրանց բարելավման միջոցառումները:
14. Հողակազմող գործընթացի գործոնները: Վ.Դոկուչանի ուսմունքը հողակազմող գործընթացի գործոնների մասին:
15. ՀՀ բնահողային գոտիները և հիմնական հողային տիպերը:
16. Կիսաանապատային գորշ հողեր, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները, բերրիության բարձրացման ուղիները:
17. Ոռոգելի մարգագետնային գորշ հողերը, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները, բերրիության բարձրացման ուղիները:
18. Աղուտ-ավլալի հողերը, առաջացման պայմանները, մելիորացիան:
19. Սևահողերը, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները, բերրիության բարձրացման ուղիները:
20. Շագանակագույն հողերը, առաջացման պայմանները, բերրիության բարձրացման ուղիները:
21. Անտառային դարչնագույն հողեր, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները:
22. Անտառային գորշ հողերը, առաջացման պայմանները, հիմնական հատկությունները:
23. Քարքարոտ և ճահճային հողերի մելիորացման առանձնահատկությունները:
24. Հողի էրոզիան, դրա տեսակները, պայքարի միջոցառումները:

25. Հողային կադաստր և դրա բաղկացուցիչ մասերը: Հողային կադաստրի դերը արդյունավետ հողօգտագործման հարցում:

«Հիդրոմելիորացիա»

1. Մելիորացիայի խնդիրներն ու տեսակները:
2. Ոռոգման անհրաժեշտության հիմնավորումը:
3. Ոռոգման ազդեցությունը հողի ֆիզիկական, քիմիական հատկությունների, ստրուկտուրայի, բերքի քանակի և որակի վրա:
4. Ոռոգման համար օգտագործվող ջրի որակը:
5. Գյուղատնտեսական մշակաբույսերի գումարային ջրասպառումը և որոշման մեթոդիկան:
6. Ոռոգման նորմի սահմանումը և որոշումը:
7. Ջրման նորմի սահմանումը և որոշումը:
8. Հիդրոմոդուլի գրաֆիկի կազմումն ու կոմպլեկտավորումը:
9. Ոռոգման համակարգի հիմնական տարրերը և ֆունկցիաները:
10. Զրաչափական կառուցումներ ոռոգման համակարգերում:
11. Ոռոգման փակ համակարգի կառուցվածքը, հաշվարկային ծախսերի որոշումը:
12. Ջրի կորուստները ոռոգման ջրանցքներից և պայքարի միջոցառումները:
13. Ոռոգման ջրանցքների հիդրավլիկական հաշվարկը:
14. Ակոսներով ջրման տեխնիկայի տարրերի հաշվարկը:
15. Մարգերով ջրման տեխնիկայի տարրերի հաշվարկը:
16. Անձրևացմամբ ջրման եղանակի սկզբունքները, կիրառման պայմանները և հաշվարկը:
17. Անձրևացնող մեքենաների, տեղակայանքների կառուցվածքը:
18. Կաթիլային ոռոգման եղանակի սկզբունքները, առավելությունները և թերությունները:
19. Ենթահողային ոռոգման եղանակը:
20. Ոռոգումը գրունտային ջրերով:
21. Չորացման մեթոդներն ու եղանակները:
22. Աղուտ և ալկալի հողերի մելիորացիան:
23. Չորացման համակարգի կառուցվածքը, ջրանցքների հաշվարկային ծախսերի որոշումը:
24. Մակերեսային հոսքի արագացումը բաց կարգավորող ցանցի միջոցով:
25. Հողի էրոզիայի առաջացման պատճառները:

Ագրոքիմիա

1. Ագրոքիմիական գիտության դերը հողերի բերրիության պահպանման և մշակաբույսերի բերքատվության բարձրացման գործում: Ագրոքիմիական գիտության ժամանակակից խնդիրները:
2. Բույսի քիմիական կազմությունը (սպիտակուցներ, ածխաջրեր, ճարպեր): Բնահողային պայմանների և պարարտանյութերի կիրառման ազդեցությունն այդ օրգանական նյութերի սինթեզի վրա:

3. Ազոտի դերը բույսերի սննդառության գործում, քիմիական կազմի և բերքի ձևավորման գործում: Բույսերի նիտրատային և ամոնիակային ազոտով սնվելու առանձնահատկությունները:
4. Ֆոսֆորի դերը բույսերի սննդառության, քիմիական կազմի և բերքի ձևավորման գործում:
5. Կալիումի դերը բույսերի սննդառության, քիմիական կազմի և բերքի ձևավորման գործում:
6. Երկաթի և միկրոտարրերի դերը մշակաբույսերի աճի և բերքատվության բարձրացման գործում: ՀՀ-ում ներկայումս այդ տարրերը պարունակող պարարտանյութերը և դրանց արդյունավետության բարձրացման ուղիները:
7. Բույսերի օդային սննդառությունը ֆոտոսինթեզ, պարարտացումը որպես այն պայ-մանավորող գործոն:
8. Հողերի կլանողական հատկությունները, տեսակները, ազդեցությունը բույսերի սննդառության և պարարտանյութերի կիրառման արդյունավետության վրա:
9. Հողի քիմիական կլանման էությունը և ազդեցությունը սուպերֆոսֆատի ձևավորությունների վրա: Սուպերֆոսֆատի կիրառման ժամկետները կապված դրանց քիմիական կլանման հետ:
10. Հողի ֆիզիկաքիմիական (փոխանակային) կլանման էությունը և կապը պարարտանյութերի կիրառման ժամկետների հետ:
11. Հողի մեխանիկական և կենսաբանական կլանումների էությունը, մշակաբույսերի կողմից սննդատարրերի կլանումը բարձրացնելու ուղիները:
12. Բնութագրել պարարտացման պահանջի որոշման մեթոդները: Ծրագրավորվող բերքի ստացման համար պարարտանյութերի անհրաժեշտ քանակության հաշվարկի սկզբունքները:
13. Պարարտանյութեր, բնութագրումը, դասակարգումը, ՀՀ-ում դրանց կիրառման տեսական ու գործնական հիմնավորումը:
14. Մշակաբույսերի պարարտացման համակարգի նպատակը, էությունը, կազմելու սկզբունքների իրականացումը: Պարարտանյութերի կիրառման ձևերը (հիմնական, նախացանքային, ցանքակից, սնուցում):
15. ՀՀ-ում կիրառվող գլխավոր ազոտական պարարտանյութերը, դրանց արդյունավետ կիրառման ձևերը, ժամկետները, չափաքանակները և ազդեցությունը մշակաբույսերի բերքատվության, բերքի որակի ու նիտրատների կուտակման վրա:
16. Ֆոսֆորական պարարտանյութեր, դասակարգումը, ստացումը, ֆոսֆոր պարունակող բնական հանքատեսակները: ՀՀ-ում կիրառվող հիմնական ֆոսֆորական պարարտանյութերը:
17. ՀՀ-ում կիրառվող գլխավոր կալիումական պարարտանյութերը, արդյունավետ կիրառման պայմանները, ազդեցությունը մշակաբույսերի աճի, բերքատվության և որակի վրա:
18. ՀՀ-ում կիրառվող բակտերիական պարարտանյութերը, ազդեցությունը հողում կենսաբանական ազոտի կուտակման և մշակաբույսերի բերքատվության վրա:
19. Երկաթ և միկրոտարրեր պարունակող պարզ և համակցված պարարտանյութեր, կիրառումը կաթիլային եղանակով և արտարմատային սնուցմամբ:
20. ՀՀ-ում կիրառվող բարդ պարարտանյութերը, ստացումը, հատկությունները, կիրառումը:

21. Օրգանական պարարտանյութեր՝ գոմաղբ բաղադրությունը, ստացումը, պահպանումը (հասունացումը), կիրառումը տարբեր մշակաբույսերի և հողային պայմանների համար:
22. Թռչնաղբ, ստացումը, բաղադրությունը, կիրառման եղանակները, չափաքանակներն ըստ մշակաբույսերի:
23. Կենսահումուսի ստացումը, բաղադրությունը, կիրառման արդյունավետ եղանակները:
24. ՀՀ հողերի ագրոքիմիական բնութագիրը:
25. Աշնանացան հասկավոր հացաբույսերի (աշնանացան և գարնանացան ցորեն, գարի, աշորա) պարարտացման առանձնահատկությունները տարբեր բնահողային պայմաններում:

Ընդհանուր երկրագործության ամբիոնի

վարիչ պրոֆեսոր՝

Ռ.Ռ.Մանուկյան